

1988 թվականի դեկտեմբերի 7-ի աՀեղ երկրաշարժը սարսեց Հայոց երկիրը, սասանեց շեն քաղաքներն ու գյուղերը, անտուն թողեց հարյուր հազարավորների: Բայց մարդկության խիղճը արթնացավ, միասնական օգնությունը աննախատեսելի չափեր ընդունեց և, բարեբախտաբար, տակավին շարունակվում է. վաղվա նորանոր օժանդակության հույսերի ակնկալիքով նորից անդրադառնում ենք Մայր Աթոռիս պաշտոնական հաղորդագրության:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռիս Գերագոյն Հոգևոր Խորհուրդը իր 1989 թուի Փետրուարի 17-ի նիստում խոր գոհունակութեամբ լսեց տեղեկատուութիւնը Վեհափառ Հայրապետի, ի մասին Նիւ-Եորքում կայացած համազգային խորհրդաժողովի, ընդ հովանեաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի, ի մասին Հիւսիսային և Հարաւային ամերիկահայութեան մասնակցութեան Ստեփանաւան քաղաքի վերաշինութեան:

Գերագոյն Հոգևոր Խորհուրդը գնահատանքով արձանագրեց հետևեալ եզրակացութիւնները.

1. Միացեալ Նահանգաց, Կանադայի, Պրազիլի և Արգենտինայի հայկական եկեղեցական, բարեգործական, մշակութային, քաղաքական և այլ հասարակական 26 կազմակերպութիւնները, որոնք մասնակցել էին Նիւ-Եորքի Փետրուարի 6-ի և 7-ի խորհրդաժողովին, յանձնառու են եղել և խոստացել հայթայթել՝ կլսնաւորանքը, սարքաւորումները, գործիքները և այլ անհրաժեշտ պիտոյքները մի դպրոցի, մանկապարտէզի, հիւանդանոցի, առողջարանի, գործարանի կամ այլ հասարակական մի շէնքի, տուեալ շէնքերի կառուցումը ստանձնած լինելով հայրենի պետութիւնը իր միջոցներով, համաձայն ընդհանուր վերաշինութեան ծրագրերի: Խորհրդակցական ժողովին մասնակցող նաև անհատ բարերարներ, Միացեալ Նահանգներից և Արգենտինայից յանձն առան կարևոր գումարներով մասնակցել վերաշինութեան գործին:

2. Յանձնառութիւն ստանձնած կազմակերպութիւնների լիազօրուած ներկայացուցիչները հրաւիրուում են Հայաստան մարտ կամ ապրիլ ամսուայ ընթացքում, որպէսզի Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի միջնորդութեամբ, ուղ-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ՀԵՏ
(27 հունիս 1989)

ղակի յարաբերութեան մէջ մտնեն պետական շինարարական յատուկ Յանձնաժողովի հետ և ճշտեն իրենց յանձնառութեան առարկան ու այդ մասին յատուկ արձանագրութիւն կազմուի փոխադարձ համաձայնութեամբ:

3. Պետական միջոցներով համապատասխան շինութիւնները պիտի կառուցուին մէկ-երկու տարիների ընթացքում: Այդ միջոցին նուիրատու հայկական կազմակերպութիւնները իրենց հանգանակած գումարներով պիտի ապահովեն պատրաստութիւնը իրենց խոստացած պիտոյքների և սարքաւորումների՝ ըստ վերոհիշեալ արձանագրութեան ու պիտի կատարեն նրանց առաքումը դէպի Հայաստան յարմար ժամանակին:

4. Պիտոյքների և սարքաւորումների առաքման թուականը և կերպը կը ճշտուին փոխադարձ համաձայնութեամբ:

5. Նուիրատու կազմակերպութեանց ներկայացուցիչները պիտի հրաւիրուին Հայաստան, ներկայ լինելու իրենց պիտոյքների և սարքաւորումների տեղադրման, արդէն իսկ կառուցուած համապատասխան շէնքերի մէջ:

6. Նուիրատու կազմակերպութեանց յատուկ ուշադրութեանն ենք յանձնում, որ թէ հայրենի պետութիւնը համապատասխան շէնքերը պիտի կարողանայ կառուցել մէկ-երկու տարիների ընթացքում, սակայն ստիպողաբար անհրաժեշտ է, որ կազմակերպութեանց ներկայացուցիչները բարի լինեն անյապաղ Հայաստան այցի գալու, արձանագրութիւն կնքելու և յստակ կերպով ճշտելու իրենց նուիրաբերելիք պիտոյքները մանրամասնօրէն, որպէսզի հանգանակուած գումարները ամբողջապէս իրենց նպատակին ծառայեն կազմակերպուած ու կանխատեսուած կերպով:

7. Յուսով ենք որ մօտ ապագայում Մայր Աթոռս կը կարողանայ մի երկրորդ հաղորդագրութեամբ, հանրութեան տեղեակ պահել առաջադրուած շինարարական ծրագրերի արդիւնքների մասին անհրաժեշտ ճշտումներով:

8. Ամենայն Հայոց Հայրապետը իր օրհնութիւնն է յղում բոլոր նուիրատու հայկական պատուարժան կազմակերպութիւններին և մեծահոգի անհատ բարերարներին:

ԴԻՈՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
27 Փետրուար 1989 թ.